ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՄՀԵՐ ԱՐՇԱԿԻ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ (19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ 20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲԸ)

Է.00.02-«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2011

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի խորհրդում

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Սաֆարյան Ալ. Վ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՄԱԽՈՍՆԵՐ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զուլալյան Մ. Կ.

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2011թ. սեպտեմբերի 15-ին, ժամը 15.00–ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, ք.Երևան, Մ. Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2011թ., օգոստոսի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու Ղազարյան Ռ. Պ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իսլամադավան նվաճողների՝ դեպի Հայկական լեռնաշխարհ արդեն առաջին արշավանքներից հետո (7-րդ դար) առաջ է եկել հայերի նկատմամբ կրոնական հալածանքի (իսլամի հարկադրման) խնդիրը: Աղբյուրները, սակայն, փաստում են, որ մինչև 11-րդ դարը հայերի նկատմամբ բռնի իսլամացման լայնածավալ քաղաքականություն չի եղել, այլ արձանագրվել են առանձին դեպքեր: 11-րդ դարում Հայկական լեռնաշխարհ և Փոքր Ասիա թյուրքական ցեղերի ներխուժումից հետո իսլամի հարկադրման երևույթն ավելի լայն տարածում է գտնում: Սելջուկներն իրենց հիմնած պետությունում բախվեցին այն խնդրին, որ զգալիորեն զիջում էին տեղի քրիստոնյա բնակչությանը, և սա կարող էր ուղղակի սպառնալիք լինել իշխող վերնախավի անվտանգության համար: Այդ պատճառով սելջուկյանների տիրապետության ժամանակ դրվեցին այն հիմքերը, որոնք հետագայում բռնի իսլամացումը դարձնելու էին թյուրքական տիրակալների էթնոքաղաքականության կարևորագույն բաղադրիչ: Փաստերը ցույց են տալիս, որ ի սկզբանե իսլամացումները տեղի են ունեցել երկու մեթոդով՝ բռնի և «կամովին»: Հարկ է դիտարկել, որ եթե բռնիի դեպքում քրիստոնյան ընտրություն էր կատարում կյանքի և մահվան միջև, ապա «կամովինի» դեպքում արդեն պայմաններն էին նրան ստիպում գնալ կրոնափոխության, այսինքն՝ ըստ էության, «կամովին»-ը ևս բռնի իսլամացման տարբերակներից մեկն էր: Բռնի կրոնափոխությունն ընդհանրապես ուծացման քաղաքականության, թերևս, առաջին բաղադրիչն է: Անշուշտ, լեզվի կամ մշակույթի կորուստը դեպի ուծացում տանող կարևոր հանգամանքներից է, սակայն կրոնն ուներ և այժմ էլ ունի անհամեմատ ավելի մեծ նշանակություն:

Ոչ մուսուլման ժողովուրդների բռնի իսլամացման քաղաքականությունն էլ ավելի կարևորվեց և սկսեց պետականորեն կիրառվել հատկապես Օսմանյան կայսրությունում: Բռնի իսլամացման քաղաքականության որդեգրումը, մշակումը, զարգացումը, ըստ էության, Օսմանյան պետության կայացման և անվտանգության կարևոր գրավականներից էին: Բռնությամբ իսլամ տարածելու մոլուցքն Օսմանյան կայսրությունում սրվեց 16-րդ դարում, երբ 1516թ. սուլթան Սելիմ 1-ինը յուրացրեց խալիֆի՝ համայն մուսուլմանների առաջնորդի տիտղոսը: Այդ

ժամանակներից սկսած՝ թուրքերը փորձեցին ստանձնել նաև քրիստոնեության և քրիստոնյաների դեմ պայքարի առաջամարտիկի դերը:

Օսմանյան կայսրությունում ոչ մուսուլման ժողովուրդները մուսուլմանների համեմատ գտնվում էին անհավասար և ոչ շահեկան դիրքերում: Դա արտահայտվում էր ինչպես հարկային, այնպես էլ իրավական դաշտում: Այս անհավասար վիճակն էլ հենց այն դրդիչ ուժն էր, որ ստիպում էր քրիստոնյաներին դիմել «կամովին» կրոնափոխության: Սակայն այստեղ հարկ է կատարել մի կարևոր դիտարկում. Օսմանյան կայսրությունում քրիստոնյաները մուսուլմանների համեմատ վճարում էին բազմապատիկ ավելի շատ և բարձր հարկեր: Փոխելով կրոնը և ընդունելով իսլամ՝ նրանք դառնում էին օսմանյան հասարակության ավելի արտոնյալ խավի ներկայացուցիչ և զերծ մնում տարատեսակ հարկերի վճարումներից: Եթե դիտարկում ենք տնտեսական տեսանկյունից, ապա կայսրության մուսուլման ղեկավարությանը ձեռնտու չէր քրիստոնյաների իսլամացումը, որը հանգեցնելու էր ֆինանսական հոսքերի նվազման: Մեր կարծիքով՝ և՛ Սելջուկյան սուլթանությունում, և՛ Օսմանյան կայսրությունում իշխանությունները կանգնած են եղել տնտեսական և քաղաքական շահերի միջև երկընտրանքի առջև. մի կողմից քրիստոնյաներից գանձվող մեծ հարկերն էին, մյուս կողմից՝ մուսուլման մեծամասնություն ձևավորելու ձգտումը: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, թուրքական տարբեր իշխանություններ, մեծ մասամբ, նախապատվությունը տվել են քաղաքական և ժողովրդագրական գերակայություններին՝ որդեգրելով բռնի իսլամացման քաղաքականությունը, որի արդյունքում իրենց նվաճած տարածքներում ավելացավ իսլամադավան բնակչությունը: Հայերի կրոնափոխության խնդրի մասին խոսելիս՝ ավելորդ չէ նաև անդրադառնալ Օսմանյան կայսրությունում 15-րդ դարից գործած «միլլեթների» համակարգին, համաձայն որի՝ պետությունն իրավական տեսանկյունից ճանաչում էր հայ առաքելական համայնքը (հետագայում՝ 19-րդ դարի առաջին կեսին, նաև հայ կաթոլիկ և հայ ավետարանական համայնքները)՝ նրան շնորհելով միլլեթի կարգավիճակ, որը ենթադրում էր որոշակի իրավունքներ և պարտավորություններ: Փաստորեն, փոխելով կրոնը՝ հայերը հայտնվում էին հայկական միլլեթից դուրս և ինքնաբերաբար համարվում մուսուլմանական ումմայի՝ համայնքի անդամ:

Բռնի իսլամացման և թուրքացման քաղաքականությունն էլ ավելի սաստկացավ Օսմանյան կայսրության անկմանը զուգահեռ և հատկապես ոչ մուսուլման ժողովուրդների ազգային-ազատագրական

շարժումների ծավալման ժամանակ: Օսմանյան կայսրությունում դարերով կիրառված բռնի իսլամացման քաղաքականությունն առավել զանգվածային և մշակված կերպով հայերի նկատմամբ կիրառվել է հատկապես 19-րդ դարի վերջի (1894-96թթ.) հայկական կոտորածների, 1909թ. Կիլիկիայի ջարդերի և 1915-23թթ. Հայոց ցեղասպանության տարիներին: Նշված ժամանակահատվածում սպանդի է ենթարկվել շուրջ երկու միլիոն հայ, իսկ հարյուր հազարավորները ստիպված ընդունել են իսլամ և հեռացվել ազգային ակունքներից:

Օսմանյան կայսրությունում հայերի բռնի կրոնափոխության խնդրի ուսումնասիրությունն արդիական է ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական առումներով: Բազմաթիվ հայ գիտնականներ տարբեր տարիներին հանդես են եկել սույն թեմայի առավել համակողմանի ուսումնասիրության կոչերով: Ինչպես նկատում է բռնի կրոնափոխված հայերի խնդիրների խորագիտակ մասնագետներից թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը. *«Կասկածից վեր է, որ ներկայումս ևս այդ թեման մեր գիտության օրակարգային հարցերից է»*[1]:

Թեման արդիական է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրի համատեքստում: Անհերքելի փաստերը ցույց են տալիս, որ հատկապես հայ երեխաների բռնի կրոնափոխությունը լիովին համապատասխանում է 1948թ. ՄԱԿ-ի ընդունած *«Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի»* կոնվենցիայի 5-րդ կետին, որտեղ սահմանվում է, որ ցեղասպանություն է համարվում *«Խմբի երեխաներին բռնությամբ մեկ այլ խումբ տեղափոխելը»*[2]:

Վերջին տարիներին ինչպես Թուրքիայում, այնպես էլ Հայաստանում և Սփյուռքում սկսեց ակտիվորեն քննարկվել Օսմանյան կայսրությունում բռնի կրոնափոխ հայերի խնդիրը: Հարկ է նկատել, որ Թուրքիայում սկզբնական շրջանում քննարկումներն անցնում էին բավական բարդ և առիթ էին դառնում տարատեսակ հալածանքների: 2007թ. սպանված Հրանտ Դինքը՝ Ստամբուլի «Ակօս» թերթի խմբագիրը, այս առիթով ժամանակին նկատել է. *«Տեսնում ենք, որ (1915-ին- Մ.Ա.) ողջ մնացածների մասին խոսելն ավելի վտանգավոր է, ավելի բարդ: Թուրքիայում 1915-ին մահացածների մասին միգուցե հնարավոր լինի*

[1]Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը հետևանքները, Երևան, 2010, էջ 3:
[2] http://www.genocide-museum.am/arm/genocide.php

խոսել, սակայն ողջ մնացածների վերաբերյալ՝ երբեք»[3]: Բացի այդ, այսօրվա Թուրքիայում տեղի ունեցող էթնիկ ինքության շուրջ զարգացումները, որոնք հանգեցրել են ինքնության ճգնաժամի, բռնի կրոնափոխության քաղաքականության ուղղակի հետևանքներն են: Ուստի, այսօրվա զարգացումները լավ հասկանալու համար կարևոր է ուսումնասիրել դրա ակունքները, և մեր սույն աշխատանքը համեստ փորձ է այդ ուղղությամբ:

Բռնի իսլամացված հայերի թեման Թուրքիայում դարձել է նաև շահարկումների նյութ և ևս մեկ առիթ հակահայկական տրամադրություններ բորբոքելու համար[4]: 2008թ. Թուրքական պատմական ընկերության նախագահ Յուսուֆ Հալաչօղլուն սկանդալային հայտարարություն արեց 1915-ին բռնի կրոնափոխված հայերի վերաբերյալ՝ ասելով, որ ալևի քրդերի մեծ մասն իրականում հայկական ծագում ունի[5]: Հալաչօղլուն ասաց նաև, որ իր ձեռքում կան կրոնափոխ հայերի ցուցակները՝ ըստ բնակության վայրերի: Այս հայտարարությունն էլ ավելի թեժացրեց իսլամացված հայերի թեմայի շուրջ բանավեճերն ու քննարկումներն ինչպես Թուրքիայում, այնպես էլ դրա սահմաններից դուրս. սա նաև պատճառ դարձավ հրապարակախոսական հոդվածների և գիտական վերլուծությունների[6]: Թուրքիայում ընթացող տարատեսակ զարգացումները ցույց են տալիս, որ բռնի կրոնափոխված հայերի հարցն օրակարգային է այդ երկրի թե՛ քաղաքական և թե՛ գիտական շրջանակների համար, ուստի, այս պայմաններում խնդրի ուսումնասիրությունը Հայաստանում ձեռք է բերում է՛լ ավելի կարևոր նշանակություն:

---

[3] Dink H., İki yakın halk, iki uzak komşu, İstanbul, 2008, s. 61-62.

[4] Թուրքիայում իսլամացված հայերի թեմայի շահարկման քաղաքականության և թուրքական անտրամաբանական տեսակետների քննադատական վերլուծության մասին տե՛ս՝ Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010, էջ 125-135:

[5] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Մելքոնյան Ռ., Թուրք պատմաբանը իսլամացված հայերի մասին, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2007, թիվ 3, էջ 96-104:

[6] Կրոնափոխ հայերի ցուցակների հետ կապված ուշագրավ հոդվածով հանդես եկավ Թուրքիայում բավական հայտնի ուսումնասիրող, ծագումով հրեա Ռըֆաթ Բալին, ներկայացնելով նաև որոշ արխիվային փաստաթղթեր, տե՛ս՝ Bali R., 1930 yılında yapılan bir nüfus çalışması ve "dönme listeleri", Toplumsal Tarih, İstanbul, 2007, sayı 166, s. 66-67.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր ուսումնասիրության հիմնական նպատակն է ցույց տալ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ բռնի իսլամացման քաղաքականության ձևավորումը, զարգացումը, ինչպես նաև կոնկրետ կիրառումն ու դրա հետևանքները: Այդ նպատակով ուսումնասիրվել են Հայկական լեռնաշխարհ թյուրքական ցեղերի ներխուժման ժամանակներից սկսած մինչև 20-րդ դարի սկիզբն աշխարհաքաղաքական, ժողովրդագրական այն ազդակները, որոնք հանգեցրել են բռնի կրոնափոխության քաղաքականության որդեգրմանն ու կիրառմանը:

Ատենախոսությունը նպատակ ունի ցույց տալ, որ ոչ մուսուլման ժողովուրդների ու մասնավորապես հայերի բռնի կրոնափոխությունը և ուծացումը Օսմանյան կայսրության իշխանությունների էթնոքաղաքականության կարևոր դրույթներից էր: Բռնի կրոնափոխության քաղաքականությունը նաև սերտորեն առնչվում է Օսմանյան կայսրությունում 19-20-րդ դարերում գոյություն ունեցած հիմնական գաղափարախոսությունների՝ օսմանիզմի (Osmancılık), իսլամիզմի (İslamcılık) և թուրքիզմի ու պանթուրքիզմի (Türkçülük/Milliyetçilik/Ulusçuluk) հետ: Քրիստոնյա ժողովուրդների բռնի իսլամացումը անմիջականորեն բխում է նաև Օսմանյան կայսրության՝ որպես ցեղասպան պետության, գաղափարախոսությունից: Աշխատանքի կարևորագույն նպատակն է փաստերի հիման վրա ցույց տալ բռնի կրոնափոխության քաղաքականության ցեղասպանական բնույթը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքում առաջին անգամ հայ իրականության մեջ նման ընդգրկմամբ և ժամանակային սահմաններում քննվում է հայերի հանդեպ Օսմանյան կայսրությունում կիրառված բռնի իսլամացման քաղաքականությունը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ աշխարհաքաղաքական, պատմական զարգացումների համատեքստում ներկայացվում են օսմանյան պետությունում ոչ մուսուլման ժողովուրդների հանդեպ կիրառված բռնի կրոնափոխության երևույթի էվոլյուցիան և վերածումը պետական մշակված քաղաքականության:

խոսել, սակայն ողջ մնացածների վերաբերյալ՝ երբեք»[3]: Բացի այդ, այսօրվա Թուրքիայում տեղի ունեցող էթնիկ ինքության շուրջ զարգացումները, որոնք հանգեցրել են ինքնության ճգնաժամի, բռնի կրոնափոխության քաղաքականության ուղղակի հետևանքներն են: Ուստի, այսօրվա զարգացումները լավ հասկանալու համար կարևոր է ուսումնասիրել դրա ակունքները, և մեր սույն աշխատանքը համեստ փորձ է այդ ուղղությամբ:

Բռնի իսլամացված հայերի թեման Թուրքիայում դարձել է նաև շահարկումների նյութ և ևս մեկ առիթ հակահայկական տրամադրություններ բորբոքելու համար[4]: 2008թ. Թուրքական պատմական ընկերության նախագահ Յուսուֆ Հալաչօղլուն սկանդալային հայտարարություն արեց 1915-ին բռնի կրոնափոխված հայերի վերաբերյալ՝ ասելով, որ ալևի քրդերի մեծ մասն իրականում հայկական ծագում ունի[5]: Հալաչօղլուն ասաց նաև, որ իր ձեռքում կան կրոնափոխ հայերի ցուցակները՝ ըստ բնակության վայրերի: Այս հայտարարությունն էլ ավելի թեժացրեց իսլամացված հայերի թեմայի շուրջ բանավեճերն ու քննարկումներն ինչպես Թուրքիայում, այնպես էլ դրա սահմաններից դուրս. սա նաև պատճառ դարձավ հրապարակախոսական հոդվածների և գիտական վերլուծությունների[6]: Թուրքիայում ընթացող տարատեսակ զարգացումները ցույց են տալիս, որ բռնի կրոնափոխված հայերի հարցն օրակարգային է այդ երկրի թե՛ քաղաքական և թե՛ գիտական շրջանակների համար, ուստի, այս պայմաններում խնդրի ուսումնասիրությունը Հայաստանում ձեռք է բերում է՛լ ավելի կարևոր նշանակություն:

---

[3] Dink H., İki yakın halk, iki uzak komşu, İstanbul, 2008, s. 61-62.

[4] Թուրքիայում իսլամացված հայերի թեմայի շահարկման քաղաքականության և թուրքական անտրամաբանական տեսակետների քննադատական վերլուծության մասին տե՛ս՝ Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010, էջ 125-135:

[5] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս՝ Մելքոնյան Ռ., Թուրք պատմաբանը իսլամացված հայերի մասին, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2007, թիվ 3, էջ 96-104:

[6] Կրոնափոխ հայերի ցուցակների հետ կապված ուշագրավ հոդվածով հանդես եկավ Թուրքիայում բավական հայտնի ուսումնասիրող, ծագումով հրեա Ռըֆաթ Բալին, ներկայացնելով նաև որոշ արխիվային փաստաթղթեր, տե՛ս՝ Bali R., 1930 yılında yapılan bir nüfus çalışması ve "dönme listeleri", Toplumsal Tarih, İstanbul, 2007, sayı 166, s. 66-67.

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեր ուսումնասիրության հիմնական նպատակն է ցույց տալ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ բռնի իսլամացման քաղաքականության ձևավորումը, զարգացումը, ինչպես նաև կոնկրետ կիրառումն ու դրա հետևանքները: Այդ նպատակով ուսումնասիրվել են Հայկական լեռնաշխարհի թյուրքական ցեղերի ներխուժման ժամանակներից սկսած մինչև 20-րդ դարի սկիզբն աշխարհաքաղաքական, ժողովրդագրական այն ազդակները, որոնք հանգեցրել են բռնի կրոնափոխության քաղաքականության որդեգրմանն ու կիրառմանը:

Ատենախոսությունը նպատակ ունի ցույց տալ, որ ոչ մուսուլման ժողովուրդների ու մասնավորապես հայերի բռնի կրոնափոխությունը և ուծացումը Օսմանյան կայսրության իշխանությունների էթնոքաղաքականության կարևոր դրույթներից էր: Բռնի կրոնափոխության քաղաքականությունը նաև սերտորեն առնչվում է Օսմանյան կայսրությունում 19-20-րդ դարերում գոյություն ունեցած հիմնական գաղափարախոսությունների՝ օսմանիզմի (Osmancılık), իսլամիզմի (İslamcılık) և թուրքիզմի ու պանթուրքիզմի (Türkçülük/Milliyetçilik/Ulusçuluk) հետ: Քրիստոնյա ժողովուրդների բռնի իսլամացումը անմիջականորեն բխում է նաև Օսմանյան կայսրության՝ որպես ցեղասպան պետության, գաղափարախոսությունից: Աշխատանքի կարևորագույն նպատակն է փաստերի հիման վրա ցույց տալ բռնի կրոնափոխության քաղաքականության ցեղասպանական բնույթը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԸ

Աշխատանքում առաջին անգամ հայ իրականության մեջ նման ընդգրկմամբ և ժամանակային սահմաններում քննվում է հայերի հանդեպ Օսմանյան կայսրությունում կիրառված բռնի իսլամացման քաղաքականությունը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ աշխարհաքաղաքական, պատմական զարգացումների համատեքստում ներկայացվում են օսմանյան պետությունում ոչ մուսուլման ժողովուրդների հանդեպ կիրառված բռնի կրոնափոխության երևույթի էվոլյուցիան և վերածումը պետական մշակված քաղաքականության:

Ցույց են տրվում այդ քաղաքականության աստիճանական զարգացման նախադրյալները, պատճառներն ու նպատակները: Ատենախոսության մեջ փաստական հարուստ հենքի վրա գիտականորեն պատասխան է տրվում Թուրքիայում այս հարցի շուրջ արվող շահարկումներին և «գիտական» կեղծ թեզերին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Աշխատանքում հիմնականում ներկայացված է 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 20-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում հայերի բռնի իսլամացման քաղաքականության կիրառումը: Առավել մանրամասն անդրադարձ է կատարված 1894-96թթ. համիդյան ջարդերի, 1909թ. Կիլիկիայի կոտորածների և 1915-23թթ. Հայոց ցեղասպանության տարիներին արձանագրված բռնի կրոնափոխություններին: Սակայն խնդիրն առավել համակողմանի ներկայացնելու նպատակով ուսումնասիրվել է նաև իսլամադավան նվաճողների, հատկապես՝ թյուրքերի Հայկական լեռնաշխարհ ներխուժելու սկզբնական շրջանից մինչև 19-րդ դարի կեսերը կիրառված կրոնական հարկադրանքի քաղաքականությունը: Այս անդրադարձը թույլ է տվել նաև ցույց տալ խնդրի աստիճանական զարգացումն Օսմանյան կայսրությունում ու կրոնափոխության և ուծացման վերածումը պետական մշակված քաղաքականության:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Ատենախոսության մեջ կիրառվել են պատմահամեմատական, համեմատական-համադրական և պատմավերլուծական մեթոդները, որոնց տեսական դրույթների հենքով էլ ներկայացվել են Օսմանյան կայսրության ոչ մուսուլման ժողովուրդների նկատմամբ կիրառված բռնի կրոնափոխության քաղաքականությունը, դրա զարգացման նախադրյալներն ու փուլերը: Ներկայացվել են նաև պատմական տարբեր ժամանակաշրջաններում օսմանյան պետական քաղաքականության կոնկրետ վերածևափոխումները՝ պատմական և աշխարհաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների համատեքստում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունն ամբողջությամբ և նրա առանձին դրույթներ կարող են օգտակար լինել ՀՀ բուհերի մասնագիտական ֆակուլտետներում և ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ուսումնական ծրագրերում ներառված «Օսմանյան կայսրության պատմություն», «Օսմանյան կայսրության էթնոքաղաքականությունը», «Էթնիկ հիմնախնդիրները Թուրքիայի Հանրապետությունում», «Օսմանյան կայսրության միլլեթների համակարգը» առարկաների դասավանդման գործընթացում: Ատենախոսության առանձին դրույթներ կարող են օգտակար լինել նաև վերլուծական կենտրոններում ներկայիս Թուրքիայի էթնիկ բնույթի խնդիրների ուղղությամբ կատարվող ժամանակակից հետազոտությունների համար: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել նաև Օսմանյան կայսրության ոչ մուսուլման ժողովուրդների վերաբերյալ հետագա աշխատությունների և դասագրքերի, ուսումնական ու մեթոդական ձեռնարկների պատրաստման ժամանակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի խորհրդում: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի ընդլայնված նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, ինչպես նաև Վանաձորում և Ստեփանակերտում (ԼՂՀ) կայացած հանրապետական ու միջազգային գիտաժողովներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը պատրաստվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն աղբյուրների, աշխատությունների, վերլուծությունների և հրապարակումների հիման վրա: Աշխատության համար խիստ կարևոր նշանակություն են ունեցել օսմանյան

արխիվային փաստաթղթեր ներառող թուրքերեն աշխատությունները, օսմանյան շրջանի մուսուլման պաշտոնյաների անձնական հուշերը[7], հայկական արխիվային փաստաթղթերը, Հայաստանին և հայությանը վերաբերող միջազգային փաստաթղթերը, ժամանակի արևմտյան դիվանագիտական ներկայացուցիչների հուշերը, զեկուցագրերը, ինչպես նաև ցեղասպանությունը վերապրածների անձնական հուշերը: Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև ժամանակակից թուրքական մամուլի որոշ հրապարակումներ: Ատենախոսության հիմնական թեմայի՝ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կիրառված բռնի կրոնափոխության քաղաքականության ուսումնասիրության տեսանկյունից հայալեզու աշխատություններից հարկ է առանձնացնել թուրքագետ Ռուբեն Մելքոնյանի մենագրություններն[8] ու հոդվածները[9]: Օսմանյան կայսրության՝ ազգային ու կրոնական փոքրամասնությունների նկատմամբ վարվող բռնաճնշումների, ուծացման և ցեղասպանական քաղաքականությունը համակողմանիորեն լուսաբանվել է վաստակաշատ թուրքագետներ Մանվել Զուլալյանի[10], Ռուբեն Սաֆրաստյանի[11] և ուրիշների[12] աշխատություններում: Ատենախոսության համար խիստ օգտակար են

[7] El-Chusein F., Bir Müslümanın gözüyle Ermenilerin şahadeti, Potsdam, 1922. Atay F., Zeytindağı, İstanbul, 1989. Adıvar H., Mor Salkımlı Ev, İstanbul, 2008.

[8] Մելքոնյան Ռ., Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները, Երևան, 2010: Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, Երևան, 2009:

[9] Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրը Թուրքիայում. ընդհանուր պատկերի ուրվագծման փորձ, 21-րդ դար, Երևան, 2008, թիվ 1, էջ 107-123: Մելքոնյան Ռ., Հայ երեխաների բռնի իսլամացումը Հայոց ցեղասպանության տարիներին (ըստ թուրքական աղբյուրների), Մերձավոր Արևելք, թիվ 5, Երևան, 2008, էջ 112-116:

[10] Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980: Զուլալյան Մ., «Դևշիրմե»-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1959, թիվ 2-3, էջ 247-256:

[11] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Երևան, 2009:

[12] Кочар М., Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос, Ереван, 1988. Кондакчян Р., Турция: внутреняя политика и ислам, Ереван, 1983. Safaryan A., Ziya Gokalp on National Turkish Education, Iran and the Caucasus, vol.8.2, Brill, Leiden-Boston, 2004, p. 55-66. Սաֆարյան Ալ., Զիա Գյոքալփը՝ թուրքական տնտեսության զարգացման մասին, Հայոց Մեծ եղեռն-90, հոդվածների ժողովածու, Երևան,2005, էջ 416-431 Սաֆարյան Ալ., Մելքոնյան Ռ., Ակադեմիկոս Վ. Գորդլևսկին Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացումների մասին, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2009, թիվ 6, էջ 298-304:

եղել ականավոր պատմաբաններ Զոն Կիրակոսյանի[13], Հրաչիկ Սիմոնյանի[14] օսմանագիտության ու քաղաքական հայագիտության հատման տիրույթի տարաբնույթ հիմնահարցերը լուսաբանող հիմնարար աշխատությունները: 1909թ. Կիլիկիայում հայերի զանգվածային կոտորածների նախապատրաստման, անցկացման և հետևանքների մասին արժեքավոր տեղեկություններ և վերլուծություններ են պարունակում Մուշեղ եպիսկոպոսի[15], անվանի գրող Զաբել Եսայանի[16] հուշագրությունները և ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնյանի մեծարժեք մենագրությունը[17]: Հայոց ցեղասպանության ժամանակ հայերի բռնի կրոնափոխության քաղաքականության վերաբերյալ արժեքավոր վերլուծություններով հանդես է եկել ճանաչված հայ ցեղասպանագետ Վահագն Դադրյանը[18]: Համշենահայերի բռնի կրոնափոխության վերաբերյալ արժեքավոր ուսումնասիրությունների հեղինակ և համշենահայոց խնդիրների բազմամյա ուսումնասիրող Սերգեյ Վարդանյանի մենագրությունն[19] ու հոդվածները[20] մեծապես օժանդակել են հայության այդ հատվածի խնդիրների բազմակողմանի ընկալմանը: Իրենց արժեքավոր հոդվածներով համշենահայերի պատմության տարբեր կողմերն են

[13] Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1982, հ. 1: Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1983, հ. 2: Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967: Կիրակոսյան Զ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Երևան, 1980:

[14] Սիմոնյան Հր., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986: Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:

[15] Մուշեղ եպիսկոպոս, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Գահիրէ,1909:

[16] Եսայան Զ., Ավերակներուն մեջ, Երևան, 2006:

[17] Սիմոնյան Հր., Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909թ. ապրիլ), Երևան, 2009:

[18] Dadrian V., Soykırımın kurbanları çocuklar; Dadrian V., Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler 2), İstanbul, Belge yayınları, 2005, s. 311-332. Dadrian V., Genç Türk ittihadcıları gizli konferansı ve I. Dünya savaşı Ermeni soykırımı kararı; Dadrian V., Türk kaynaklarında Ermeni soykırımı (toplu makaleler 2), İstanbul, Belge yayınları, 2005, s. 333-359.

[19] Վարդանյան Ս., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը, Երևան, 2009:

[20] Վարդանյան Ս., Նախկին Խորհրդային Միությունում բնակուող մահմետական հայերը, Բազմավեպ, Վենետիկ, 1996, թիվ 1-4, էջ 189-200: Վարդանյան Ս., Համշենի մուսուլման հայերը, Իրան-Նամէ, Երևան, 1993, թիվ 4, էջ 12-13: Վարդանյան Ս., Համշենցի մուսուլման հայերի ուսումնասիրության պատմությունից, Իրան-նամէ, Երևան, 1998, թիվ 1-2-3, էջ 2-11:

լուսաբանում թուրքագետ Լուսինե Սահակյանն[21] ու ամերիկահայ ուսումնասիրող Հովհաննն Սիմոնյանը[22]:

Վերջին շրջանում Թուրքիայում ևս կրոնափոխ հայերի թեմայի նկատմամբ ակտիվացել է հետաքրքրությունը, ինչն էլ մի շարք թուրք հեղինակների ուսումնասիրությունների հրատարակման պատճառ է դարձել: Հարկ է նկատել, սակայն, որ այդ աշխատություններից շատ քչերում է պահպանվում գիտական օբյեկտիվությունը, և շատ հաճախ մեզ համար առավելապես օգտակար են եղել դրանցում ներկայացված օսմանյան արխիվային փաստաթղթերը: Թուրքիայում հրատարակված նմանատիպ գրքերից կարելի է առանձնացնել Իբրահիմ Աքնուրի[23], Էրհան Բաշյուրթի[24] աշխատությունները:

Այնուամենայնիվ, թուրք գիտնականների մեջ ևս կան այնպիսի հեղինակներ, որոնց աշխատություններում և ուսումնասիրություններում կարելի է հանդիպել փաստերի անկողմնակալ ներկայացման, իսկ երբեմն նաև համարձակ գնահատականների: Այս առումով հետաքրքիր և արժեքավոր է թուրք պատմաբան Սելիմ Դերինգիլի հոդվածը[25], նվիրված 1894-1896թթ. կոտորածների ժամանակ հայերի բռնի իսլամացումներին: Ուշագրավ է նաև թուրք ուսումնասիրող Ֆուաթ Դյունդարի մենագրությունը[26], նվիրված Օսմանյան կայսրության էթնոքաղաքականությանը: Գրքի շահեկան կողմերից է նաև այն, որ դրանում հավաքված են հայերի կրոնափոխությանը վերաբերող արխիվային բազմաթիվ փաստաթղթեր: 2009թ. Թուրքիայում լրագրող, ուսումնասիրող Մուրադ Բարդաքչին հրատարակեց Թալեաթի անձնական օրագիրը[27], որտեղ ոճրագործը գրառումներ ունի բռնի իսլամացված հայ երեխաների, լքված հայկական գույքի, տարագրված

[21] Սահակյան Լ., Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 4, Երևան, 2006, էջ 207-228:

[22] Simonian H., Hemshin from Islamicization to the end of the nineteenth century, The Hemshin: history, society and identity in the Highlands of Norteast Turkey, London-New York, 2007, p. 52-99.

[23] Atnur İ., Türkiyede Ermeni kadınları ve çocukları meselesi (1915-1923), Ankara, 2005.

[24] Başyurt E., Ermeni evlatlıklar: saklı kalmış hayatlar, İstanbul, 2006.

[25] Deringil S., "The Armenian Question Is Finally Closed": Mass Conversion of Armenians in Anatolia during Hamidian Massacres of 1895-1897, Comparative Studies of Society and History, Cambidge, 2009, 51 (2), p. 344-370.

[26] Dündar F., Modern Türkiye'nin Şifresi: İttihat ve Terakki'nin Etnisite Mühendisliği (1913-1918), İstanbul, 2008.

[27] Bardakçı M., Talât Paşa'nın Evrak-ı Metrûkesi, İstanbul, 2009.

հայերի թվաքանակի վերաբերյալ: Չնայած Բարդաքչի խիստ կողմնակալ և երբեմն ապագիտական մոտեցումներին, մեզ համար արժեքավոր են երիտթուրք պարագլխի կողմից անձամբ գրված փաստերն ու տվյալները: Վերջին շրջանում Թուրքիայում տպագրվում են նաև գրքեր, հոդվածներ, որտեղ կրոնափոխության համար մեղադրում են հենց կրոնափոխվածներին՝ նրանց համարելով սպառնալիք Թուրքիայի անվտանգության համար: Այդ գրքերը, որոնք գիտական լինելու հավակնություն իսկ չեն կարող ունենալ, այսուհանդերձ տարածում են գտնում թուրքական հասարակության մեջ: Դրանցից հարկ ենք համարում նշել մասնավորապես Սուլեյման Յեշիլյուրթի[28] և Արսլան Բուլութի[29] գրքերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են աշխատանքի հիմնական նպատակները, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ *«Իսլամադավան նվաճողների ներթափանցումը Հայկական լեռնաշխարհ և բռնի կրոնափոխության քաղաքականության ձևավորումը»*, կազմված է երկու ենթագլխից՝ *«Հայերի բռնի կրոնափոխության քաղաքականության ձևավորումը և զարգացման հիմնական միտումները 11-17-րդ դարերում»* և *«Համշենահայերի բռնի իսլամացումը»*:

Առաջին ենթագլխում ներկայացված է իսլամադավան նվաճողների՝ քրիստոնյաների ու մասնավորապես հայերի նկատմամբ վարվող բռնի կրոնափոխության քաղաքականության սկզբնավորումը: Փաստերը ցույց են տալիս, որ արաբների կառավարման ժամանակ հայերի զանգվածային իսլամացման դեպքերը համեմատաբար ավելի քիչ են նկատվել, սակայն սելջուկ-թյուրքերի տիրապետության

[28] Yeşilyurt S., Geçmişten günümüze Rum ve Ermeni dönmeler, Ankara, 2007.

[29] Bulut A., Gizli Ermeniler, İstanbul, 2010.

շրջանում դրանք կտրուկ ավելանում են: Արդեն սելջուկյանների ժամանակ ակնհայտ էին բռնի իսլամացման քաղաքականության ձևավորման սաղմերն ու նախադրյալները, որոնք ավելի մշակված և համակարգված բնույթ ստացան հատկապես Օսմանյան կայսրությունում, որտեղ բռնի կրոնափոխությունը և ուծացումը հիրավի դարձան պետական քաղաքականության անկյունաքարեր: Հայերի կրոնափոխության համար թուրքերը կիրառել են գերազանցապես մահվան սպառնալիքի մեթոդը, որին զուգահեռ տարածված է եղել նաև այնպիսի պայմանների ստեղծման քաղաքականություն, որը կհանգեցներ քրիստոնյաների «կամովին» կրոնափոխության: Մասնավորապես՝ Օսմանյան կայսրության հպատակ մուսուլմաններն ու քրիստոնյաները գտնվում էին խիստ անհավասար պայմաններում. մուսուլման քաղաքացին ուներ անհամեմատ ավելի շատ իրավունքներ և արտոնություններ, ինչից զուրկ էր քրիստոնյան: Բացի այդ, մուսուլմանները չունեին հարկային այն ծանր բեռը, որը դրված էր քրիստոնյաների ուսերին: Այս պայմանները ևս երբեմն ստիպում էին հայ քրիստոնյաներին դիմել «կամովին» կրոնափոխության: Այս նույն համատեքստում պետք է դիտարկել հայկական ազնվական որոշ ընտանիքների կրոնափոխությունը՝ արտոնությունները և դիրքը պահպանելու համար: Կրոնափոխության երևույթը տարածում է գտնում նաև մուսուլմանական արհեստավորական համքարություններում (ֆութուվվաթ), և տնտեսական արտոնությունների կամ պարզապես գոյատևելու համար որոշ թվով հայ արհեստավորներ ևս երբեմն ստիպված են եղել փոխել կրոնը: Կայսրությունում մշակվել և դարերով կիրառվել է բռնի կրոնափոխության այնպիսի մեթոդ, ինչպիսին է մանկահավաքը՝ դևշիրմեն:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում ներկայացված է Սև ծովի հարավ-արևելյան ափերին բնակվող հայերի մի խմբի, որն առավելապես հայտնի է համշենահայեր անվանումով, բռնի իսլամացումը: Նախ ներկայացվում է այդ տարածքներում հայերի ավելի հոծ խմբերով բնակվելու պատմությունը, նրանց կիսանկախ գոյությունը մինչև 15-րդ դարի վերջերը: Փաստերը ցույց են տալիս, որ համշենահայության պարագայում կրոնափոխության գրեթե բոլոր մեթոդները կիրառվել են: Նրանց հանդեպ օսմանյան իշխանությունների բռնի իսլամացման քաղաքականությունն առավել սուր և կազմակերպված բնույթ է ստանում հատկապես 18-րդ դարի սկզբին,

որի հետևանքով հազարավոր հայեր կոտորվում են, շատերն էլ հարկադրված են լինում փոխել կրոնը: Այս ենթագլխում ներկայացվում է նաև արդեն կրոնափոխ համշենահայերի շրջանում պահպանված քրիստոնեական սովորույթների գաղտնի կիրառումը կամ, այսպես կոչված, ծպտյալ քրիստոնեությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ *«Հայերի բռնի իսլամացման քաղաքականությունը 19-րդ դարի երկրորդ կեսին»*, բաղկացած է երկու ենթագլխից՝ *«Քաղաքական գործընթացները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և հայերի վիճակը»* և *«Հայերի բռնի իսլամացումը 1894-96թթ. կոտորածների տարիներին»*:

Առաջին ենթագլխում ներկայացված են 19-րդ դարում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած կարևոր քաղաքական զարգացումները՝ Թանզիմաթյան բարեփոխումները, սահմանադրական շարժումը: 1839թ. մեկնարկած Թանզիմաթյան բարեփոխումներով նախատեսվում էր վերացնել մուսուլմանների և քրիստոնյաների միջև եղած տարատեսակ անհավասարությունները: Խոստացված բարեփոխումները նաև ազդակ հանդիսացան, որպեսզի ավելի վաղ բռնի կրոնափոխված հայերը սկսեն վերընդունել քրիստոնեություն և վերադառնալ իրենց ազգային ակունքներին: Այս հանգամանքը լուրջ մտահոգություն դարձավ օսմանյան իշխանությունների համար, որոնք քայլեր ձեռնարկեցին դադարեցնելու իսլամացված հայերի վերազարթոնքը և պատմությունը ցույց տվեց, որ նախատեսված բարեփոխումները իրականում մնացին թղթի վրա ու կոնկրետ կիրառության չստացան: Ավելին՝ փաստերն ապացուցում են, որ այդ շրջանում ևս հայերի նկատմամբ պետական հալածանքները և բռնի իսլամացման քաղաքականությունը շարունակվեցին: Հայահալած քաղաքականությունը որևէ փոփոխության չենթարկվեց նաև Թանզիմաթյան բարեփոխումների երկրորդ շրջանում, ինչպես նաև սահմանադրական շարժման տարիներին: «Բարեփոխիչների» համարում ունեցող օսմանյան պետական հայտնի գործիչները ոչ միայն փոփոխություն չմտցրին հայերի հալածանքի և բռնի իսլամացման քաղաքականության մեջ, այլև նորովի լծվեցին այդ գործին՝ դա համարելով օսմանյան պետության գոյատևման կենսական միջոցներից մեկը:

Այս գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվում են 1894-96թթ. պատմական Հայաստանի տարբեր նահանգներում և

Կոստանդնուպոլսում տեղի ունեցած հայկական կոտորածների ժամանակ մահվան սպառնալիքի ներքո իրականացված հայերի զանգվածային իսլամացումը: Տարբեր աղբյուրների համադրումը ցույց է տալիս, որ 1894-96թթ. կոտորվել են 300 հազար, բռնի իսլամացման են ենթարկվել շուրջ 200 հազար հայեր: Այս ենթագլխում քննվում է նաև կոտորածներից հետո բռնի իսլամացված հայերի վերադարձի և քրիստոնեություն վերընդունելու խնդիրը: 19-րդ դարի վերջին տեղի ունեցած իսլամացումներից հետո բավական մեծ թվով հայերի է հաջողվել վերադառնալ իրենց ակունքներին, ինչին նպաստել են տարբեր պայմաններ, որոնցից էր արևմտյան տերությունների միջամտությունը: Այստեղ հարկ է դիտարկել նաև այն, որ բռնի իսլամացված հայերի քրիստոնեության վերադառնալու փաստը չվրիպեց օսմանյան իշխանությունների ուշադրությունից, որոնք այդ փորձը հաշվի առան հետագայում՝ 1909թ. Կիլիկիայի կոտորածի և հատկապես 1915-23թթ. Հայոց ցեղասպանության տարիներին:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ *«Հայերի բռնի իսլամացման քաղաքականությունը 20-րդ դարի սկզբին»*, բաղկացած է երկու ենթագլուխներից՝ *«Հայերի բռնի իսլամացումը 1909թ. Կիլիկիայի կոտորածի ժամանակ»* և *«Բռնի կրոնափոխության հիմնական թիրախները Հայոց ցեղասպանության տարիներին. հայ երեխաները և կանայք»:*

Առաջին ենթագլխում նկարագրվում են 1909թ. Կիլիկիայի հայերի կոտորածի ժամանակ տեղի ունեցած բռնի իսլամացումը: Փաստերի համադրմամբ ցույց է տրվում, որ Օսմանյան կայսրությունում՝ անկախ իշխանության ղեկին գտնվող քաղաքական ուժի կողմնորոշումից, հայերի նկատմամբ որդեգրված բռնի կրոնափոխության քաղաքականությունը շարունակվել է: Նկատելի է նաև, որ 1894-96թթ. կոտորածների համեմատ Կիլիկիայի կոտորածի ժամանակ ավելի է խստացվել պետության վերաբերմունքը հայերի կրոնափոխության հարցի առնչությամբ: Այսպես, արդեն 1909թ. ուրվագծվեցին այն հիմնական թիրախային խմբերը, որոնց նկատմամբ արդեն 1915-ին իրականացվելու էր պետականորեն մշակված քաղաքականություն. մասնավորապես Կիլիկիայի կոտորածի ժամանակ կրոնափոխությունը հիմնականում տարածվում էր հայ կանանց և երեխաների վրա, իսկ տղամարդիկ անգամ իսլամանալու դեպքում սպանվում էին: Այս ենթագլխում քննվում են նաև Կիլիկիայի կոտորածից

հետո հայկական կազմակերպությունների, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության ջանքերը՝ իսլամացված հայերին հետ դարձնելու ուղղությամբ, ինչը բախվել է օսմանյան բարձրագույն իշխանության բացասական վերաբերմունքին, և ինչը ևս մեկ անգամ ապացուցում է, որ հայերի կրոնափոխությունը պետականորն մշակված քաղաքականություն էր:

Երկրորդ ենթագլխում ներկայացված են Հայոց ցեղասպանության տարիներին պետականորեն կիրառված կրոնափոխության քաղաքականության մանրամասները: Արդեն 1911թ. երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության կոնգրեսում ընդունված որոշումը շատ հստակ սահմանում էր, որ Օսմանյան կայսրության ոչ մուսուլման ազգությունները կամ պետք է իսլամանան կամ հեռանան երկրից: Երիտթուրք բազմաթիվ ղեկավար գործիչներ բացահայտ հայտարարում էին, որ կայսրության ոչ մուսուլման ժողովուրդների ուծացումը, այսինքն՝ թուրքացումը, իրենց համար ամենաառաջնային խնդիրներից է: Խոսքից անցնելով գործի՝ երիտթուրքական իշխանությունները կազմակերպեցին և իրականացրեցին Հայոց ցեղասպանությունը, որի ժամանակ էլ բռնի կրոնափոխության ենթարկեցին հազարավոր հայերի: Հարկ է նկատել նաև, որ Հայոց ցեղասպանության մեկնարկից հետո թուրքական հասարակության տարբեր շերտեր, այդ թվում և «մտավորականներ», հանդես եկան ոճիրի պաշտպանության դիրքերից ու ժամանակի օսմանյան մամուլում կարելի էր հանդիպել հայերին՝ իսլամացնելու միջոցով, թուրքացնելու բացահայտ կոչերի: Հայերի բռնի իսլամացումը (ինչպես և զանգվածային ոչնչացումը) գտնվել է երիտթուրքական պարագլուխների՝ Թալեաթի, Էնվերի և Ջեմալի անմիջական վերահսկողության ներքո: Այս ենթագլխում ներկայացված օսմանյան արխիվային բազմաթիվ փաստաթղթերից մեջբերումներն ապացուցում են բռնի իսլամացման ցեղասպանական բնույթը: Հատուկ ուշադրություն է դարձված և փաստերով ապացուցված է, որ Հայոց ցեղասպանության տարիներին օսմանյան պետական մեքենան հստակ նախանշել էր բռնի կրոնափոխության ենթակա թիրախային երկու խումբ՝ հայ կանանց և երեխաներին, որոնց նկատմամբ էլ բարձրագույն իշխանությունների կոնկրետ հրամաններով իրականացրեց իսլամացումը: Հենց Թալեաթի ծածկագիր հրամաններով հայ երեխաները վերցվել են թուրքական որբանոցներ՝ թուրքացվելու նպատակով, ինչպես նաև բաժանվել են մուսուլման ընտանիքներին այն պայմանով, որ նրանց

տրվի իսլամական և թուրքական դաստիարակություն: Ավելորդ չէ դիտարկել նաև, որ թուրքական որբանոցներում առավելապես հավաքվել են հայ տղա երեխաները, ըստ երևույթին, հատուկ ենիչերիական կրթություն ստանալու համար: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ օսմանյան մանկահավաքի (դևշիրմե) ավանդույթները պահպանվել են ընդհուպ մինչև կայսրության անկումը: Հայ կանանց նկատմամբ ևս գործել է իսլամացման պետական քաղաքականություն, համաձայն որի ամուսիններին կորցրած այրի հայուհիներին, ինչպես նաև դեռատի աղջիկներին պետական կառույցները բաժանում էին մուսուլմաններին: Այստեղ ավելորդ չէ նկատել, որ քրիստոնյա կանանց նկատմամբ նման քաղաքականությունը նոր չէր օսմանյան իրականության համար և 20-րդ դարի սկզբին թուրքերը իրագործեցին այն նույն մեթոդը, ինչն իրականացրել էր օսմանյան սուլթան Օրհանը դեռևս 14-րդ դարում: Հայոց ցեղասպանության տարիներին կազմակերպվել են նաև ստրկավաճառական շուկաներ, որոնց հիմնական «ապրանքներից» են եղել հայ կանայք, որոնք այս ճանապարհով ևս ենթարկվել են իսլամացման:

Փաստերը ի ցույց են հանում նաև այն իրողությունը, որ ցեղասպանության տարիներին հայ երեխաների և կանանց բռնի իսլամացմանը մասնակից են եղել և՛ օսմանյան պետությունը, և՛ մուսուլմանական հասարակության տարբեր շերտեր: Ընդ որում, մուսուլմանական ընտանիքները հայ որբերին ու կանանց վերցրել են զուտ շահադիտական նկատառումներով:

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո արևմտյան պետությունների աջակցությամբ հայկական կառույցները սկսում են իսլամացված հայերի փրկության գործընթացը, որի արդյունքում մուսուլմանական գերությունից ազատվում են շուրջ 100 հազար հայեր: Սակայն այս անգամ ևս իսլամացված հայերի վերադարձին խոչընդոտում են թուրքական արդեն նոր իշխանությունները, որոնք առիթի դեպքում, չնայած իրենց թուլացած վիճակին, փորձում են շարունակել կրոնափոխության դարավոր քաղաքականությունը:

Ատենախոսության վերջում ընդհանրացվում է աշխատանքը, ներկայացվում են հիմնական եզրակացությունները.

- Սկսած 7-րդ դարից՝ Հայկական լեռնաշխարհ ներխուժած իսլամադավան նվաճողները պարբերաբար բռնի կրոնափոխության են ենթարկել հայության առանձին խմբերի:

- Քրիստոնյաների, մասնավորապես հայերի բռնի կրոնափոխության քաղաքականության հիմքերը ձևավորվում են դեռևս սելջուկյան տիրապետության ժամանակ, երբ իսլամացումը արդեն ստացել էր կազմակերպված բնույթ:

- Հայերի նկատմամբ բռնի կրոնափոխությունը՝ որպես պետական քաղաքականություն, որդեգրվում է օսմանյան պետության հիմնադրման արդեն սկզբնական շրջանում և հետագայում ենթարկվում է «կատարելագործման»:

- Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացման քաղաքականությունն ավելի լայնածավալ բնույթ է ստանում 16-րդ դարի սկզբից, երբ օսմանյան սուլթան Սելիմ 1-ինի կողմից յուրացվեց խալիֆի տիտղոսը:

- Բռնի կրոնափոխությունը տեղի է ունեցել գերակշիռ դեպքերում մահվան սպառնալիքի ներքո, իսկ «կամովին» իսլամացումը նույնական է պարտադրանքի:

- Բռնի կրոնափոխության և ուծացման քաղաքականությունն արդեն 19-րդ դարից անմիջականորեն շաղկապվում է գերակայող գաղափարախոսությունների՝ օսմանիզմի, իսլամիզմի, հետագայում նաև թուրքիզմի ու պանթուրքիզմի կենսագործման հետ:

- Օսմանյան կայսրության թուլացմանը զուգահեռ՝ սաստկանում է բռնի կրոնափոխության քաղաքականությունը, որն ամենայն դաժանությամբ կիրառվում է 19-րդ դարի վերջի համիդյան կոտորածների, 1909թ. Կիլիկիայի կոտորածի և 1915-23թթ. Հայոց ցեղասպանության տարիներին:

- Հայերի բռնի կրոնափոխությունը կազմակերպել է օսմանյան պետական մեքենան՝ անկախ սուլթանի կամ կառավարության քաղաքական կոնկրետ կողմնորոշումներից:

- Կրոնափոխության հիմնական թիրախներն են եղել երեխաները և կանայք: Հատկապես երեխաների նկատմամբ Օսմանյան կայսրությունում կիրառվել է, թերևս, առավել մշակված մանկահավաքի քաղաքականությունը:

- Հայերի բռնի իսլամացումը կիրառվել է ընդհուպ մինչև Օսմանյան կայսրության անկումը: Ոչ մուսուլման ժողովուրդների բռնի կրոնափոխության քաղաքականությունը հստակ ցեղասպանական գործողություն է:

- Բռնի իսլամացման ենթարկվելուց հետո երկար ժամանակ հայության այդ խմբերը պահպանել են ազգային և կրոնական սովորույթների տարրեր, իսկ հարմար առիթի դեպքում՝ վերադարձել քրիստոնեությանն ու իրենց ազգային ինքնությանը:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքները

1. Աբրահամյան Մ. Ա., Օսմանյան կայսրությունում հայ երեխաների բռնի իսլամացման մեթոդների շուրջ, Կանթեղ, Երևան, 2009, թիվ 2 (39), էջ 233-236:
2. Աբրահամյան Մ. Ա., Հայերի բռնի իսլամացումը 1894-96թթ., 21-րդ դար, Երևան, 2010, թիվ 4 (32), էջ 66-70:
3. Աբրահամյան Մ. Ա., Հայերի բռնի կրոնափոխության քաղաքականությունը սելջուկյան տիրապետության շրջանում, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում տեղի ունեցած հանրապետական երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու, Վանաձոր, 2011, էջ 151-154:
4. Աբրահամյան Մ. Ա., Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի իսլամացման խնդրի շուրջ, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. VII, Երևան, 2011, էջ 180-184:

АБРААМЯН МГЕР АРШАКОВИЧ

ПОЛИТИКА НАСИЛЬСТВЕННОЙ ИСЛАМИЗАЦИИ ОСМАНСКОЙ ИМПЕРИИ ПО ОТНОШЕНИЮ К АРМЯНАМ

(с конца 19 – го века до начала 20 – го века)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – "Всемирная история".

Защита состоится 15-ого сентября 2011г., в 15.00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена широко применяемой в Османской империи политике насильственной исламизации и охватывает промежуток времени с конца 19-ого века до начала 20-ого века. Основная цель данного исследования – показать формирование, развитие, конкретное применение и последствия политики насильственной исламизации армян в Османской империи. Для того, чтобы продемонстрировать все это, были изучены геополитические и этнографические предпосылки, начиная со времен проникновения тюркских племен в Армянское Нагорье и до начала 20-го века, которые привели к принятию и применению политики насильственного вероотступничества. Работа преследует цель представить на рассмотрение также то, что насильственное вероотступничество немусульманских народов и в особенности армян являлось важнейшим условием этнополитики Османской империи, которую применяли и развивали ее различные властители и руководители. Принятие, разработка и применение политики насильственной исламизации стали по существу залогом становления и безопасности Османского государства. Политика насильственной исламизации обострилась параллельно с упадком Османской империи и особенно во время распространения народно-освободительных движений немусульманских народов. Применяемая веками политика насильственной исламизации в наиболее обстоятельно разработанном виде применялась по отношению к армянам, начиная с резни армян конца 19-ого века (1894-96 гг.) и до геноцида армян 1915-1923гг., последствием чего явилась гибель двух

миллионов армян, а сотни тысяч армян насильственным образом сменили свою религию, приняв ислам.

Работа состоит из введения, трех глав с соответствующими разделами, выводов и списка использованной литературы.

В введении обоснована актуальность темы диссертации, представлены основные цели данной работы, ее научная новизна, прикладное значение, а также обзор использованной литературы.

В первой главе "Проникновение исламских захватчиков в Армянское Нагорье и формирование политики насильственного вероотступничества" представлено применяемое по отношению к армянам насильственное вероотступничество после захвата исламскими агрессорами: арабами, турками-сельджуками. Во время господства арабов случаев массовой исламизации армян замечено сравнительно мало, однако в эпоху владычества турков – сельджуков они резко возрастают. Зачатки развития и предпосылки политики насильственной исламизации во время сельджуков получили более систематический и отработанный характер. Краеугольным камнем в политике Османской империи стало насильственное вероотступничество армян. В первой главе представлена также насильственная исламизация группы армян, проживавших на юго-восточных берегах Черного моря, которые более известны, как амшенские армяне. Факты показывают, что политика насильственной исламизации со стороны исламских властей по отношению к последним получает наиболее острый и организованный характер, особенно в начале 18-ого века, вследствие чего тысячи армян истреблялись, многие были вынуждены поменять веру. В этой главе представлено также тайное соблюдение христианских обычаев в среде поменявших веру амшенских армян.

Во второй главе диссертации "Политика насильственной исламизации армян во второй половине 19-го века" представлено имевшее место в 19-ом веке политическое развитие Османской империи – Танзиматские реформы, конституционное движение. Принятые в 1839г. Танзиматские реформы предполагали равенство всех граждан Османской империи, однако факты показывают, что в этот период в отношении армян также продолжались притеснения, а политика исламизации продолжалась с той же интенсивностью. Более того, известные государственные деятели, так называемые "реформаторы", не только не внесли никаких изменений в политику насильственной исламизации и притеснений армян, но и по-новому впряглись в это дело, считая его одним из насущных для Османского государства. В этой главе представлено массовое

вероотступничество армян во время резни 1894-96 гг., жертвами которой пали 300 тысяч, а насильственной исламизации подверглось 200 тысяч армян.

В третьей главе диссертации "Политика насильственной исламизации армян в начале 20-ого века" описывается имевшая место в Киликии резня армян 1909 г. и их насильственная исламизация. В этой главе довольно подробно представлено насильственно вероотступничество, имевшее место во время геноцида армян. Факты позволяют утверждать, что в годы геноцида армян применялась откорректированная и отточенная веками политика насильственной исламизации. Вероотступничество армян находилось непосредственно под контролем лидеров младотурков, в частности, Талаата, Энвера, Джемаля. В этой главе представлены цитаты из многочисленных документов османских архивов, которые доказывают строго организованный характер вероотступничества.

В конце обобщается работа и представляются основные выводы, а также список использованной литературы.

MHER A. ABRAHAMYAN

THE OTTOMAN EMPIRE'S POLICY OF FORCIBLE ISLAMIZATION TOWARDS ARMENIANS

(from the end of the 19th century until the beginning of the 20th century)

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World history" 07.00.02.

The Defense of the Dissertation will take place at 15.00 on September 15, 2011 at the Meeting of Specialized Council 006 acting at the Oriental Studies Institute of NAS RA. Address: 0019, Yerevan, av. Marshal Baghramyan, 24/4.

SUMMARY

The present dissertation is devoted to the Ottoman Empire's widely applicable policy of forcible islamization and covers the period from the end of the 19th century until the beginning of the 20th century. The main purpose of the present work is to demonstrate the formation and the development of the Ottoman Empire's policy of forcible islamization of Armenians, as well as its concrete application and consequences. To present the aforesaid, geopolitical and ethnographical prerequisites of the penetration of Turkic tribes to Armenian Highland (up to the beginning of the 20th century) that led to the adoption and application of forcible conversion have been studied. The purpose of the dissertation is to illustrate that forcible conversion of non-Muslim people, particularly Armenians, was one of the most important postulates of the Ottoman Empire's ethnographic policy that was applied and developed by different Ottoman leaders. The adoption and development of the forcible islamization policy was an essential condition of the Ottoman State establishment and security. The policy of forcible islamization exacerbated simultaneously with the collapse of the Ottoman Empire and particularly during liberation movements of non-Muslim people. The policy of forcible islamization that was applied during many centuries, was used with respect to Armenians in its most thoroughly developed way beginning with the massacre of Armenians at the end of the 19th century (1894 - 1896) and until the genocide of Armenians in 1915 – 1923, as a result two million Armenians were killed and hundreds of thousands were forcibly converted and had to adopt Islam.

The dissertation consists of the introduction, three chapters with corresponding subchapters, conclusions and the list of used sources and literature.

The introduction presents the topicality of the dissertation, its main objectives and scientific novelty, its application significance, as well as a review of the used sources and literature.

The first chapter "Penetration of Islamic invaders into Armenian Highlands and formation of forcible conversion policy" describes forcible conversion of Armenians after the seizure by Islamic invaders: Arabs, Seljuk Turks. During the supremacy of Arabs, cases of mass islamization of Armenians were comparatively rare, however under the sway of Seljuk Turks they increased dramatically. Prerequisites and development sources of forcible islamization policy under the sway of Seljuk Turks got more systematic and improved. The cornerstone of the Ottoman Empire politics was forcible conversion of Armenians. The first chapter presents also the forcible islamization of a group of Armenians who lived on the south-eastern coasts of the Black Sea, who are better known as Hamshen Armenians. Facts show that forcible islamization policy with respect to Hamshen Armenians can be characterized as the sharpest and the most organized, especially at the beginning of the 18th century, as a result thousands of Armenians were eliminated and many of them had to be converted. This chapter presents also the secret observance of Christian customs by converted Hamshen Armenians.

The second chapter of the dissertation "Policy of forcible islamization of Armenians in the second half of the 19th century" presents the political development of the Ottoman Empire – Tanzimat reforms, constitutional movement. Adopted in 1839, Tanzimat reforms supposed to grant equality to all citizens of the Empire, but according to facts in this period Armenians were still oppressed and the islamization policy was as intensive as before. Moreover, popular statesmen, the so-called "reformers" did not make any changes in the forcible islamization policy, besides they immersed themselves into this process, considering it vital for the Ottoman State. This chapter tells about mass conversion of Armenians during the massacres in 1894-1896, 300 thousand Armenians fell victims to it and 200 thousand were forcibly islamized.

The third chapter of the dissertation "Policy of forcible islamization of Armenians at the beginning of the 20th century" describes the massacre of Armenians and their forcible islamization that took place in 1909 in Cilicia. This chapter presents the details of forcible conversions during the genocide of Armenians. Certain facts permit confirming that during the genocide of Armenians the policy of forcible islamization, developed during centuries and perfected, was commonly used. Conversion of Armenian was under the direct control of Young Turks' leaders: Talaat, Enver, Djemal. This chapter presents also quotations from numerous documents of the Ottoman archives that prove the strongly organized nature of conversion.

In the end there is a summary of the dissertation and conclusions, as well as the list of the used sources and literature.